

**ԳՐԱԲԱՐԻ ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. գրաբար, համաժամանակյա քննություն, անվանողական կայուն կապակցություններ, մակբայական կայուն կապակցություններ, բառային տարբերակներ, քերականական տարբերակներ, ձևաբանական տարբերակներ, շարահյուսական տարբերակներ, քանակային տարբերակներ, տարբերակների միագումարություն:

Ключевые слова и выражения: грабар, синхронный анализ, номинативные устойчивые сочетания, адverbальные устойчивые сочетания, лексические варианты, грамматические варианты, морфологические варианты, синтаксические варианты, квантитативные варианты, совокупность вариантов.

Key words and phrases: old Armenian, synchronic analyses, nominative stable compounds, adverbial stable compounds, lexical variants, grammatical variants, morphological variants, syntactical variants, quantitative variants, oneness variants.

Կայուն կապակցությունները (հետայսու՝ ԿԿ) երկու կամ ավելի բաղադրիչներով ձևավորված պատրաստի վերարտադրելի կառույցներ են, որոնք հանդես են գալիս վերաիմաստավորված (դարձվածային) կամ ոչ փոխաբերական նշանակություններով¹:

¹ Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ «Կապակցության վերաիմաստավորումը սահմանազատում է դարձվածքները (իդիոմները) կայուն բառակապակցություններից: Նպատակահարմար է արտահայտություն կոչել այն բառակապակցությունները, որոնք դարձվածային ձևավորում ունեն, բայց վերաիմաստավորված չեն, իդիոմատիկ նշանակություն չունեն: Այլ կերպ ասած՝ արտահայտությունների բաղադրիչ բառերը գործածված են մնում իրենց սովորական բառային իմաստներով (տե՛ս Պ.Ս.Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս» հրատ., 1973, էջ 18, 31):

Ըստ իրենց ընդհանրական իմաստի՝ բառակապակցության կառուցվածք ունեցող կամ անվանողական² ԿԿ-ները համախմբվում են՝ հարաբերակցվելով բառերի բառաքերականական կարգերին՝ խոսքի մասերին:

Հին հայերենում զգալի տեսակարար կշիռ ունեն մակբայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող ԿԿ-ները: Այդ կարգի ԿԿ-ները հատկանշվում են որոշ յուրահատկություններով, որոնք պայմանավորված են ոչ միայն մակբայների խոսքիմասային առանձնահատկություններով, այլև այդ կարգի միավորների ձևաիմաստային բնութագրով:

Ինչպես ԿԿ-ների համար ընդհանրապես, այնպես էլ գրաբարի մակբայական ԿԿ-ների համար մասնավորապես հատկանշական է տարբերակների կամ զուգաձևությունների առկայությունը:

Առհասարակ ԿԿ-ների տարբերակները բաղադրիչների բառային, քերականական (ձևաբանական և շարահյուսական), ինչպես նաև քանակային կազմի տարբերություններ դրսևորող միավորներ են, որոնք ունեն ձևային միևնույն անխախտելի հիմքը և պահպանում են կապակցության իմաստային նույնականությունը³:

Ընդհանրապես տարբերակայնությունը՝ որպես լեզվական իրողություն, ենթադրում է փաստական նյութի՝ ամեն մի առանձին լեզվի պատմական զարգացմամբ և քերականական կառուցվածքի յուրահատկություններով պայմանավորված քննություն:

Սույն հոդվածում քննարկվում են մակբայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող ԿԿ-ների փոփոխակները գրաբարի մակարդակում համաժամանակյա կտրվածքով: Առանձին-առանձին քննության են առնվում հին հայերենի մակբայական ԿԿ-ների բառային, քերականական և քանակային տարբերակները, ինչպես նաև ներկայացվում են տարբերակային ԿԿ-ների իրացումները խոսքաշարում: Ըստ որում, մեր ուսումնասիրության ծիրի մեջ ընդգրկված են ինչպես գրաբարյան

² Անվանողական ԿԿ-ների մասին հանգամանորեն տե՛ս Պ.Ս.Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 128-165, Խ.Գ.Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 91-291:

³ Դարձվածային տարբերակների մասին տե՛ս Ալ.Ս.Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 1990, էջ 335-337, Հ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, Ե., «Ճարտարագետ» հրատ., 2004, էջ 141, В.М.Мокиенко, Славянская фразеология, М., «Высшая школа», 1989, էջ 26, Е.И.Диброва, Природа значения вариантной ФЕ, Сб. Вопросы лексической и фразеологической семантики, Ростов н/Д, РГПИ, 1979, էջ 79:

(պատրաստի վերարտադրելի) ոչ փոխաբերական ԿԿ-ների, այնպես էլ միաբնեռ դարձվածային միավորների և իդիոմների⁴ շրջանակներում ի հայտ եկող կառուցվածքային տարբերակները⁵:

Ա. Բառային տարբերակներ: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է ԿԿ-ների տարբերակներում հանդես եկող բառային փոփոխակների հիմնականում երկու տիպ՝ 1. հոմանիշներ, 2. իմաստային միևնույն դաշտին կամ իմաստային-թեմատիկ միևնույն խմբին պատկանող բառեր⁶:

Առհասարակ մակբայական ԿԿ-ները հատկանշվում են կառուցվածքային առանձնահատկություններով: Այդ կարգի ԿԿ-ները կարող են ձևավորվել նաև առանց մակբայների մասնակցության. նրանք մակբայներին հարաբերակցվում են առաջին հերթին իրենց արտահայտած իմաստներով: Ըստ որում, խնդրո առարկա ԿԿ-ներում զգալի քանակություն են կազմում միագազաթ կառույցները: Այդօրինակ ԿԿ-ներում բացակայում է կառուցվածքային առումով գերադաս բաղադրիչը: Միագազաթ ԿԿ-ները ձևավորվում են մեկ լիիմաստ և մեկ թերիմաստ բաղադրիչներով, ընդամին, նրանց լիիմաստ անդամները կարող են հանդես գալ ծավալումներով:

Ստորև բերվող օրինակները մակբայական միագազաթ ԿԿ-ների *հոմանիշային փոփոխակներ* են.

Շանց **գունակ // օրինակ**⁷ (չարքաշաբար), իբրև **զգառն // զոչխար** (խոնարհաբար), ընդ **այգն // առաւօտն** (առավոտյան), **որպէս // իբրև** ի

⁴ Միաբնեռ և իդիոմատիկ դարձվածային միավորների մասին հանգամանորեն տե՛ս Ա.Գ.Назарян, Фразеология современного французского языка, М., “Высшая школа”, 1987, էջ 64:

⁵ Առհասարակ զուգաձևությունների գոյությունն ամենից առաջ պայմանավորված է լեզվի կառուցվածքային հնարավորություններով (տե՛ս Զ.Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2007, էջ 119):

⁶ Հմմտ. О.М.Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, (АКД), Ленинград, ЛГУ, 1973, էջ 8, Н.В.Соколова, Варианты узуальных фразеологизмов в произведениях Ю.Бондарева, Сб. Проблема тождества фразеологических единиц, Челябинск, ЧГПИ, 1990, էջ 2-3:

Երբեմն նշվում է իմաստային առնչակցություն չունեցող բառային փոփոխակների առկայությունը (տե՛ս В.М.Мокиенко, նշվ. աշխ., էջ 36, Н.В. Соколова, նշվ. աշխ., էջ 2-3):

⁷ **Որպէս** և **իբրև** սպասարկու բառերը գրաբարում հիմնականում հանդես են գալիս որպէս հայցական, իսկ **գունակ** և **օրինակ** բառերը՝ սեռական խնդիրներով նախադրություններ (Նախադրությունների (հետադրությունների) մասին հանգամանորեն տե՛ս Ա.Բագրատունի, Հայերեն քերականություն ի պէտս

կարկոտյա հարեալք (հանկարծակի, անսպասելիորեն), **որպէս // իբրև** գոչխար **ի սպանումն // ի սպանդ** (խոնարհաբար, ենթարկվելով):

Հետևյալ ԿԿ-ներում բառային փոփոխակներն արտահայտում են իմաստային միևնույն դիտվածքի (դաշտի) հասկացություններ կամ միևնույն հատկության (որակի) կրողներն են. **արեան // մահու** չափ (խիստ, սաստիկ, շատ-շատ), ի ձեռն **հաւատոց // հրեշտակաց** (հրաշքով):

Հմմտ. մակբայական ԿԿ-ների բառային (հոմանշային) տարբերակները խոսքային միջավայրում. Իսկ ի միևնույն աուրն **ընդ այգն ընդ առաւօտն** հրամայեաց արկանել ծիրանիս, եւ զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական ... (Ագաթ., Դ):

Գրաբարի մակբայական ԿԿ-ներում հանդիպում են նաև *բառային-բառակազմական փոփոխակներ*. ընդ **այգն // ընդ այգսայգոյն** (լուսադեմին, լուսաբացին), **վայր // վայրիկ** մի (մի պահ, մի փոքր ժամանակ), առ **ժամանակ** մի // առ **ժամայն** (միառժամանակ):

Հմմտ. այդ կարգի տարբերակները հետևյալ համատեքստերում. Արդ եկաց բազմեալ ուռուցեալ **վայր մի**, իսկ յոտն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ.... (Բուզ., 4, ԾԴ): **Վայրիկ մի** ևս, սակաւիկ մի ևս կալցիս ժոյժ, և ահա հասեալ է օգնականութիւն (ն.տ., ԾԵ): Յետ կատարելոյ փորձութեանն ի բաց եկաց ի նմանէ սատանայ **առ ժամանակ մի** (Ղեւ. 81): Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով **առ ժամայն** լուսաւորեալ և թևամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնն (Կոր., 36):

Բ. Քերականական տարբերակներ: Մակբայական ԿԿ-ներում առանձնացվում են այդօրինակ ձևաբանական և շարահյուսական գուգաձևություններ: Ըստ որում, այդ կարգի փոփոխակները հաճախադեպ են գրաբարի մակբայական ԿԿ-ներում⁸:

զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 119, Մ.Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 206, Ա.Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976, էջ 261, Գ.Բ.Թոսունյան, Գրաբարի նախադրությունները (V-XI դդ.), Լեզվի և ոճի հարցեր, VII, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 24, Լ.Մ.Խաչատրյան, Գ.Բ.Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., «Ձանգակ» հրատ., 2004, էջ 278:

⁸ Ընդհանրապես մակբայական գուգաձևությունների մասին տե՛ս Ա.Բագրատունի, նշվ. աշխ., էջ 224-229, Մ.Չամչեանց, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1843, էջ 134-135:

Խնդրո առարկա ԿԿ-ների *քերականական-ձևաբանական տարբերակայնությունը* գրաբարում աղերսվում է հիմնականում հոլովի և թվի զուգաձևության հետ:

1. Մակբայական ԿԿ-ների կառուցվածքային դիտվածքում առկա գոյականական (այլև ածականական և դերանվանական) բաղադրիչների տարբեր հոլովաձևերով են հանդես գալիս հետևյալ տարբերակները. **ի տեղիս տեղիս** // **ի տեղաց տեղաց** (զանազան տեղերում), **ի մասնե** // **մասամբ ինչ** // **~իիք** (մասնակիորեն), յետ **սակաւ** // **սակաւու** միոյ (փոքր-ինչ հետո), **սկամա կամս** // **կամօք** (հարկադրաբար, իր կամքին հակառակ կերպով), ըստ **կամս** // **կամաց**, ըստ **միտս** // **մտաց** (ուզածի պես), **արեան** // **արեամբ** չափ, **մահու** // **մահուամբ** չափ (չափազանց, սաստիկ, շատ-շատ) և այլն:

Հմտ. **Ըստ կամս** դիրություն անձանց մերոց գնասցուք (Ագաթ., 49): Ոչ գոք թողուցու **ըստ** անձանց **կամս** գնալ (ն. տ., 285): Այնուհետև **ըստ կամաց** չարութեանն իւրոյ գնացեալ լինէր նա (Բուգ., 109): Այնուհետև **ըստ կամաց** գնային (ն. տ., 30):

Առանձին դեպքերում մակբայական ԿԿ-ների տարբերակներն ստեղծվում են նախդիր-նախադրությունների փոփոխություններով պայմանավորված հոլովական տարաձևությամբ. **ի** // **ըստ կամաց** (իր կամքով՝ ցանկությամբ), **ոչ** // **ոչ ըստ կամաց** (իր կամքին հակառակ), **առ** // **ըստ հարկի** (հարկադրված, բռնի կերպով), **ժամ ի** // **ընդ** // **քան (զ) ժամ** (երբեմն-երբեմն, պահ առ պահ):

Մակբայական տարբերակային ԿԿ-ներում գոյականական բաղադրիչները կարող են հանդես գալ որոշյալ-անորոշ ձևերով: Ըստ որում, նրանցում այդ կարգի (որոշյալ-անորոշ) հակադրությունն իմաստային և քերականական առումներով չեզոք է:

Հմտ. ըստ **կամաց** // **կամացն** (ուզածի պես, իր կամքով), իբրև **ծառայ** // **զծառայ** (ստրկամտորեն, հնազանդվելով), իբրև **ճրագ** // **զճրագ** (լուսավորելով):

Հմտ. Վարէին գնա **ըստ կամաց** իւրեանց (Բուգ., 132): Ուսոյց ամենեցուն **ըստ** իւրոց **կամացն** գնալ (Ագաթ., 417):

2. Հին հայերենի մակբայական ԿԿ-ներում ձևաբանական տարբերակներ են ստեղծվում գոյականական (կամ փոխանվանաբար գործածված) բաղադրիչների եզակի-հոգնակի ձևերով: Այդօրինակ երկձևություններում, սակայն, թվի քերականական կարգի նշանակությունը չի պահպանվում. եզակի-հոգնակի ձևերն իմաստային և քերականական առումներով չեզոք են մնում:

Հմտ. իբրև **գոչխար // գոչխարս** (խոնարհաբար, ենթարկվելով), որպես **ծնող // ծնողք** (հոգատարությամբ, սրտացավորեն), **ազգէ յազգ // ազգաց յազգս** (ցեղից ցեղ, սերնդեսերունդ)⁹, **ի սրտէ // ի սրտից** (սիրով), **ի սկզբանէ // ի սկզբանց** (հիմքից, սկզբից), ընդ **առաւօտն // առաւօտս** (առավոտյան), ըստ **արժանի // արժանեաց** (արժանիքի համաձայն), ըստ **օրինին // օրինացն** (օրենքի համաձայն, ընդունված կերպով), ըստ **կամի // կամաց**, ըստ **մտի // մտաց** (կամքի՝ մտադրության համաձայն)¹⁰:

Հմտ. **Ըստ օրինին** ծննդականաց ծնաւ զանդրանիկն (Ագաթ., 196): Եւ նա ետ բերել **ըստ օրինացն** հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից աղ (Բուգ., 139): Եւ եղև նա **ըստ մտի** թագաւորին Պարսից (ն. տ., 136): Սկսան գնալ **ըստ** իրեանց **մտաց** (ն. տ., 223):

Ուշագրավ հոլովական (հոլովչային) և թվային գուգաձևություն է ցուցաբերում **ընդ երկնաւ // երկնիք** (երկնքի տակ, աշխարհում, կյանքում) տարբերակային ԿԿ-ն:

Հետևյալ ԿԿ-ները դրսևորում են բառային և ձևաբանական (թվի) տարբերակայնություն. **հաճ եւ հաւան // հաւանք եւ հաւասարք** (միաբանված, սիրով, խաղաղությամբ), օրինակ իմն **չարագոյն գագանի** ինչ **// պիղծ գագանաց** օրինակ (անհոգի կերպով, դաժանաբար), ուշի **ուշով // ~ մտօք** (ամբողջ ուշադրությամբ)¹¹:

Մակբայական ԿԿ-ների բառային-բառակազմական և ձևաբանական (թվի) երկձևություններ են իբրև **գօտար ոք // գօտարտիս** (օտարի պես, անհոգի կերպով), իբրև **գայր // գքաջայրս** (խիզախորեն, քաջաբար) փոփոխակները:

Հմտ. Պնդեա՝ **իբրև այր** զմէջ քո (Ագաթ., 168): **Իբրև գքաջայրս՝** զառաջիկայ զօգտաբեր շքեղաբար հրահանգս մանկանցն հոգացեալ լնուին (Փարպ., 110):

⁹ **Ազգ** բաղադրիչի կրկնությամբ կազմված ԿԿ-ների մասին հանգամանորեն տե՛ս Լ.Մ.Խաչատրյան, Գրաբարի ուսումնական բառարան, Ե., «Ձանգակ» հրատ., 2013, էջ 13:

¹⁰ Ինչպես վերը բերված կառույցները, այնպես էլ այլ նախդիր-նախադրություններով ձևավորված մի շարք կապակցություններ գրաբարում համարվել են ոճեր կամ ոճական արտահայտություններ, որոնք «իրենց տարբեր իմաստներով հնարավորություն են ընձեռել բազմապիսի հասկացություններ առանց որևէ դժվարության արտահայտելու համար» (տե՛ս Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., Եր. համալս. հրատ., 1981, էջ 137-138):

¹¹ **Ուշ** բաղադրիչով կազմված այս և այլ ԿԿ-ների մասին տե՛ս Լ.Մ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 304:

Մեզ հետաքրքրող ԿԿ-ների շրջանակներում *քերականական-շարահյուսական գուրգռություններն* առաջանում են հիմնականում բաղադրիչների շարադասական փոփոխություններով:

Հմտ. **զգիշերն ամենայն եւ գտին ամենայն // գտին ամենայն եւ զգիշերն ամենայն, ի զիշերի եւ ի տուրնջեան // ի տուրնջեան (// տուրնջեան) եւ ի զիշերի** (զիշեր-ցերեկ, շարունակ), **օրինակ զայս // զայս օրինակ** (այս օրինակով՝ ձևով)¹², **յական թոթափել // ի թոթափել ական** (մի ակնթարթում):

Միաժամանակ բառային, ձևաբանական (հոլովաձևային) և շարադասական տարբերակայնություն են ցուցաբերում **իբրն զԲարեյունի հնոցին բոց // իբրն զհուր հնոցին ի Բարեյուն** (չափազանց՝ սաստիկ եռավով, խիստ բորբոքված վիճակում) ԿԿ-ները:

Հմտ. Բորբոքեցաւ **իբրն զհուր հնոցին ի Բարեյուն**, մինչև իւրքն իսկ անդէն ևս իբրն զքաղղէացիսն այրեցեալ լինէին (Եղ., 13): Որք **իբրն զԲարեյունի հնոցին բոց** տեսանէին բարձրացեալ զամբարշտութեանն կիզումն (Փարսլ., 112):

Ձևաբանական (թվային, այլև հոլովական) և շարահյուսական (շարադասական) երկձևություն են ցուցաբերում հետևյալ ԿԿ-ները. **ժամ ընդ ժամ // ընդ ժամս ժամս** (երբեմն-երբեմն), **(թէ) ի զիշերի եւ (թէ) ի տուրնջեան // ի տուէ եւ ի զիշերի** (մշտապես, շարունակ):

Հմտ. Արդ յո՛ր կողմ և նոքա ի պատերազմ կացին **թէ ի զիշերի և թէ ի տուրնջեան**, սոքա վառեալք և պատրաստ անդր գտանէին (Լաստ., ԺԶ): Զայն պաշտօնէիցն **ի տուէ եւ ի զիշերի** անհատ էին ի սուրբ սաղմոսն (Եղ., 68):

ԿԿ-ների շարադասական տարբերակները, սակայն, այս կամ այն բաղադրիչի շեշտման, ընդգծման հետ կապված չեն:

Գ. Քանակային տարբերակներ: Մակբայական ԿԿ-ների այդ կարգի փոփոխակները հանդես են գալիս նրանց համառոտ և ծավալուն կառուցատիպերով: ԿԿ-ների ձևը փոխվում է մասնակիորեն, իսկ բովանդակությունը մնում է գրեթե նույնական:

Գրաբարի մակբայական ԿԿ-ներում հիմնականում առկա են ընդհանուրի և մասնավորի (վերացականի ու կոնկրետի) փոխհարաբերություններ դրսևորող տարբերակներ¹³:

¹² Հմտ. **զօրինակ զայս** ԿԿ-ն վերը բերված կապակցությունների նկատմամբ տարբերակայնություն է դրսևորում **զ** նախդրի կրկնությամբ:

¹³ Մասնագիտական գրականության մեջ ԿԿ-ների քանակային տարբերակներում առանձնացվում են հատկապես բաղադրիչների քանակային կազմի կրճատումով ի հայտ եկող փոփոխակները (տե՛ս Լ.Դ.Игнатъева, Количественное варьирование во

Հմմտ. առ ժամանակ մի // *մինչև առ ժամանակ մի* (միառժամանակ), *ի* // *յամենայն* սրտէ (սիրով), *գոհի(ն)* // ~ *ամենայն* եւ *զգիշեր(ն)* (*ամենայն*) (շարունակ, մշտապէս), *իբրև զհուր* // ~ *հնոցին ի Բաբելոն*, *իբրև* // *քան զհնոց(ն)* // ~ *Բաբելոնի* (խիստ՝ սաստիկ բորբոքվելով՝ եռալով, ամենակործան՝ ահարկու կերպով)¹⁴, *իբրև զօձ* // ~ *թունաւոր* (խիստ՝ սաստիկ թունաւոր կերպով, չարակամորեն), *իբրև զարծաթ* // ~ *ի բովս* (խիստ թրծվելով՝ մաքրվելով), *իբրև զոչխար* // ~ *ի սպանդ* // ~ *ի սպանումն* (խոնարհաբար, հնազանդորեն), *որպէս մեղուս* // ~ *ընդդէմ ծաղկանց* (համառորեն հարձակվելով) և այլն:

Հմմտ. Եմուտ *իբրև զօձ* ի մէջ ամրացելոցն (Եղ., 91): Մերթ շանթեր գալարեր *իբրև զօձ թունաւոր*, մերթ պարզեր գոչեր իբրև զառիժ գայրացեալ (ն. տ., 16): Ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայսն ձախակողմեանն՝ որք կապեալ էին ի կռապաշտութեանն անլուծանելի հանգուցիք, վառեալք և ջեռեալք *իբրև զհնոց* առ այրել զուխտ սուրբ եկեղեցոյ (ն. տ., 8): Նիւթ նոցա անմտութեանն ... բորբոքեցէք առաւել *քան զհնոցն Բաբելոնի* (Խոր., 248):

Մակբայական ԿԿ-ների քանակային տարբերակներ կարող են առաջանալ նաև տվյալ կապակցության՝ հեղինակային տարբեր մեկնաբանությունների հետևանքով¹⁵:

Հմմտ. *օրինակ իմն որպէս փոթորիկ* // ~ *յանտառէ տերևաթափ* (խիստ արագ, ուժգին թափով), *նման արծաթոյն* // ~ *ընդ մատնութեանն իսմայէլացի վաճառականացն* (խիստ թրծվելով, փորձության ենթարկվելով), *իբրև զոչխար(ս)* // ~ *ի մէջ սպականիչ գալոց* (խոնարհաբար, հնազանդվելով, ենթարկվելով) և այլն:

Հմմտ. վերը բերված տարբերակային ԿԿ-ների երկրորդ եզրում առկա կառույցները (հեղինակային ծավալումները) խոսքային միջավայրում. *Օրինակ իմն որպէս փոթորիկ յանտառէ տերևաթափ*, այնպէս երազ

фразеологических единицах с компонентом “как”, “хоть”, “если”, Сб. Проблема тождества фразеологических единиц, էջ 81):

¹⁴ Հմմտ. մասի և ամբողջի փոխհարաբերություն են դրսևորում տարբերակային հետևյալ ԿԿ-ները. *իբրև* // *քան զհնոց(ն) Բաբելոնի* // *իբրև զԲաբելոնի հնոցին բոց*:

Ուշագրավ է, որ խնդրո առարկա ԿԿ-ների տարբերակներում հանդիպում են հնչյունական փոփոխությունների հետևանքով առաջացած տարատեսակություններ, հմմտ. *քան զհնոցն Բաբելոնի* // ~ *Բաբելոնի* (ահարկու կերպով), *ի բնէ* // *ի բնւէ* (հիմքից, հենց սկզբից):

¹⁵ Ընդհանրապես ԿԿ-ների՝ հեղինակային զանազան միջամտությունների հետևանքով ի հայտ եկող կառուցվածքային տարբերակների մասին տե՛ս В.Т.Бондаренко, Семантика устойчивой фразы в речи. Тождество и различие, Сб. Проблема тождества фразеологических единиц, էջ 145-146.

յերիվարացն առեալ նիգակօք՝ դի ցուրտ յերկիր ընկենուին (Խոր., 303): Պատիւս և մեծութիւնս, **նման արծաթոյն ... ընդ մատնութեանն իսմայէլացի վաճառականացն** (Փարպ., 25): Եւ տայր ի ձեռս նորա զժողովուրդս տեառն **իբրև զնխարս ի մէջ ապականիչ գայլոց** (Ղեւ., 166):

Այսպիսով՝

1. Մակբայական ԿԿ-ները բառակապակցության ձևավորումով և անվանողական (ոչ հաղորդակցական) արժեքով հանդես եկող պատրաստի վերարտադրելի կառույցներ են, որոնց բաղադրիչները միասնաբար արտահայտում են վերաիմաստավորված կամ ոչ փոխաբերական նշանակություններ:

2. Ինչպես ԿԿ-ներին ընդհանրապես, այնպես էլ հին հայերենի մակբայական ԿԿ-ներին մասնավորապես բնորոշ է կառուցվածքային տարբերակներ ունենալը:

3. Գրաբարի մակբայական ԿԿ-ների տարբերակները նույն կառույցների փոփոխակներն են՝ բառերի, բառաձևերի, շարահյուսական կառուցվածքի, բաղադրիչների քանակային և հնչյունական մասնակի փոփոխություններով: Այդօրինակ ԿԿ-ների յուրաքանչյուր զույգում կամ շարքում կարևորվում է իմաստային նույնականության պահպանումը:

4. Հինհայերենյան մակբայական ԿԿ-ներում առկա են թե՛ հոմանշային (միջբառությային իմաստային) հարաբերություններ դրսևորող և թե՛ իմաստային միևնույն դաշտի հասկացություններ արտահայտող բաղադրիչների փոփոխակումներով ձևավորված բառային տարբերակներ:

5. Գրաբարի մակբայական ԿԿ-ներում հաճախադեպ են քերականական (ձևաբանական և շարահյուսական) զուգաձևությունները:

Քննվող ԿԿ-ներում ձևաբանական փոփոխակումը կապված է հիմնականում հոլովի և թվի զուգաձևությունների հետ:

Խնդրո առարկա ԿԿ-ների շարահյուսական երկձևությունները մեծ մասամբ ձևավորվում են բաղադրիչների շարադասական փոփոխություններով:

6. Մակբայական ԿԿ-ների քանակային տարբերակներն առաջանում են նրանց համառոտ և ծավալուն կազմերի դեպքում: Քանակային կազմով փոփոխվող ԿԿ-ները, սակայն, պահպանում են իմաստային նույնականությունը:

7. Տարբերակներով հանդես եկող ԿԿ-ն մտնում է լեզվի մեջ որպես իր տարբերակների միագումարություն:

ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Տիֆլիս, 1909:
Բուզ. - Փաստոսի Բուզանդացոյ Պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:
Լաստ. - Պատմություն Արիստակիսի Լաստիվերտցոյ, Երևան, 1963:
Խոբ. - Մովսիսի Խորենացոյ Պատմություն Հայոց, Տիֆլիս, 1913:
Կոր. - Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
Ղեւ. - Ղեւոնդեայ վարդապետի Պատմություն, Ս. Պետերբուրգ, 1887:
Փարպ. - Ղազարայ Փարպեցոյ Պատմություն Հայոց, Տիֆլիս, 1904:

Լ. Ավետիսյան

**Գրաբարի մակբայական կայուն կապակցությունների տարբերակները
Ամփոփում**

Գրաբարի մակբայական կայուն կապակցությունները (ԿԿ) ունեն գանազան տարբերակներ. բառային (որպէս//իբրև ի կարկտոյ հարեալք, ի ձեռն հաւատոց // հրեշտակաց), քերականական (ձևաբանական - արեան // արեամբ չափ, ըստ կամի // կամաց, ընդ երկնաւ // երկնիւք, շարահյոյսական - զգիշերն ամենայն եւ զտին ամենայն // զտին ամենայն եւ զգիշերն ամենայն, իբրև զԲաբելոնի հնոցին բոց // իբրև զհուր հնոցին ի Բաբելոն) եւ քանակային (առ ժամանակ մի // մինչև ~, իբրև զօձ // ~ թունաւոր):

Տարբերակային ԿԿ-ն մտնում է լեզվի մեջ որպէս իր տարբերակների միագումարություն:

Лилит Аветисян

**Варианты адвербальных устойчивых сочетаний грабара
Резюме**

Адвербальные устойчивые сочетания (УС) грабара имеют различные варианты: лексические (որպէս // իբրև ի կարկտոյ հարեալք, ի ձեռն հաւատոց // հրեշտակաց), грамматические (морфологические – արեան // արեամբ չափ, ըստ կամի // կամաց, ընդ երկնաւ // երկնիւք, синтаксические – զգիշերն ամենայն եւ զտին ամենայն // զտին ամենայն եւ զգիշերն ամենայն, իբրև զԲաբելոնի հնոցին բոց // իբրև զհուր հնոցին ի Բաբելոն) և количественные (квантитативные – առ ժամանակ մի // մինչև ~, իբրև զօձ // ~ թունաւոր).

Вариантная УС входит в язык как совокупность своих вариантов.

The variants of adverbial stable compounds of old Armenian

Summary

The adverbial stable compounds (SC) of old Armenian have different variants: lexical (որպէս // իբրև ի կարկտոյ հարեալք, ի ձեռն հաւատոց // հրեշտակաց), grammatical (morphological – արեան // արեամբ չափ, ըստ կամի // կամաց, ընդ երկնաւ // երկնիք, syntactical – զգիշերն ամենայն եւ գտին ամենայն // գտին ամենայն եւ զգիշերն ամենայն, իբրև զԲաբելոնի հնոցին բոց // իբրև զհուր հնոցին ի Բաբելոն) and quantitative – առ ժամանակ մի // մինչև ~, իբրև զօձ // ~ թունաւոր.

She variant SC enters into the lang